

Ч. Чүрүмб
Мөнгөнгүй мөнгөнгүй
16.11.1939.

891.99

5-47



EROS BD S P
13 APR 2011

891-99
S-478

ՎԱՀԱՆ ՏԵՐԵԱՆ

(115)

ՄԹՆՅԱՆԻ ԱՆՈՒԲՅԱՆԵՐ

32-2828
1939
Պեյրուզ

Վահան Տերեան

5749-56

22.08.2013

24289-Կ.Դ

3

ՏԵՐՈՒԹԻՒՆ

Սահուն քայլերով, աննշմար, որպէս քնքոյշ մութիթև,
Մի ըստուեր անցաւ ծաղիկ ու կանաչ մեղմիւ շոյելով.
Իրիկնաժամին, թփերն օրօրող հովի պէս թեթեւ
Միուրու անցաւ, մի գունատ աղջիկ ճերմակ շորերով...

Արձակ գաշտերի ամայութեան մէջ նա մեղմ շշնչաց,
Կարծես թէ սիրոյ քնքոյշ խօսք ասաց նիրհող գաշտերին,
Ծաղիկների մէջ այդ անուրջ կոյսի շշնկը մնաց
Եւ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին...

ԷՍՈՆԱԿԱՆ ԵՐԳ

Երբ կը յոգնես, կը գաղազես աշխարհից՝
Դարձի՛ր իմ մօտ, վերադարձի՛ր դու նորից. —
Ճաւած սիրտս միայն քեզնով է շնչել՝
Զի կամենալ նա վերստին քեզ տանջել:

Եթէ բախտն ու վայելքները քեզ ժպտան,
Օտար մարդիկ քեզ սիրաբար ողջոյն տան,
Գուցէ ես լամ բախտիգ համար, իմ անդին,
Սակայն դարձի՛ր, վերադարձի՛ր դու կրկին:

Եթէ հեռուում ճակատագիրն անհոգի
Սիրտդ մատնէ անկարեկից տանջանքի,
Օ՛, գիտեցիր, իմ հոգին էլ կը ցաւի
Անմիթար մորմոքումից քո ցաւի...

1906



3525-55

ԱՇՈՒՆ

Դալուկ դաշտեր, մերկ անտառ...
 — Մահացողի տխուր կեանք.
 Անձրեւ, քամի, սեւ կամար...
 — Մրտակառը հեկեկանք:

Միգում չողաց մի ցուրտ լոյս.
 Օ՛, արդիօք կա՞յ վերադարձ,
 Մահացողի անզօր լոյս,
 Վհատ սրաի տխուր հարց...

Անուժ ցաւի ցուրտ կապար...
 Մահացողի տխուր կեանք.
 — Անմիթա՞ր, անսպա՞ռ
 Վհատութեան հեկեկանք...

1906/7

ՇԻՐԱԿԻ ԴԱՇՏԵՐԻՑ

Աստղերն են ժպտում լուսեղէն նազով,
 Խաղաղ դաշտերը մութն է համբուրում.
 — Ես կախարդուած եմ միշտ նոյն երազով,
 Միշտ նոյն ցնորքն է իմ սիրտը այրում:

Մօտեցած երկնից աստղերը պայծառ
 Ժպտում են խաղաղ քո աչքերի պէս.—
 — Իմ լքուած սրտի կարօտը անծայր
 Ամէն ինչի մէջ որոնում է քեզ...

1905

* * *

Սարի ետեւում շողերը մեռան,
 Անուշ դաշտերը պատեց կապոյտ մէկ.
 Տխուր երեկոն զարկել է վրան.
 — Միրտս կարօտով կանչում է քեզ՝ եկ:

Խորհրդաւոր է երկինքն երազուն.
 Վարսաթա՞փ ուռի, դողդոջո՞ւն եղէկ.
 Մրծաթ խօսքերով աղրիւրն է խօսում.
 — Միրտս կարօտով կանչում է քեզ՝ եկ:

Ծաղիկներն ահա քնքոյշ փակւեցին,
 Բացւեցին երկնի ծաղիկներն անհաս.
 Սեւ տագնապները իմ սիրտը լցրին.
 — Արդեօք ո՞ւր ես զու, իմ անուշ երազ:

Միրտ իմ, այդ ո՞ւմ ես զու ի զուր կանչում,
 Տես՝ գիշերն անցաւ, աստղերը մեռան,
 Մենաւոր իմ սիրտ, մոլորուած թոշուն,
 Կարօտիդ կանչը չի հասնի նրան...

1908

* * *

Եւ մոռացուած եւ անմոռաց հէքեաթներ,
 Ճոյս հնչիւններ, որ զողում են աշխարհում,
 Քնքոյշ աստղեր, որ վառում են ու մարում.
 — Կեանքս, նա էլ մի լուսեղէն հէքեաթ էր...
 Ճառագայթներ, որ չողացին ու չկան,
 Մթնչաղի ուղուագծեր նրահեւս.

Կեանքս, հեռուում անյայտ կորած մի հեղ լոյս
Որ չի վառում ոչ անցեալը, ոչ ներկան:

Հեռածաւալ անյայտներում պահւըտած
Փալիք օրերն անհուն, անտես խաւարում.
— կեանքս յաւէտ քեղ անծանօթ տաճարում
Կանթեղի պէս առկայծում է քո դիմաց...

1905

F A T U M

Կախարդական մի չլթայ կայ երկնքում՝
Աներեւոյթ, որպէս ցաւը խոր հոգու.
Իջնում է նա յուշիկ, որպէս իրիկուն,
Օղակելով լոյս աստերը մէկ-մէկու:

Մեղմ զիշերի գեղագանգուր երազում՝
Այն աստղերը, որպէս մոմեր սրբագան,
Առկայծում են կարօտագին, երազուն՝
Թաւերժաբար իրար կապուած եւ բաժան:

Ես ու դու էլ չղթայուած ենք իրարու,
Կարօտավառ երազում ենք միշտ իրար,
Միշտ իրար հետ, բայց միշտ բաժան եւ հեռու,
Աստղերի պէս եւ հարազատ, եւ օտար...

1906

ԷԼԵԳԻԱ

Մեռնում է օրը: իջաւ թափանցիկ
Մութի մանուածը գաշտերի վրայ.
Խաղաղ-անչար է, պայծառ, գեղեցիկ,
Անտրտունջ նինջը մահացող օրուայ...

Պարզ ջրի վրայ նեղէցը հանդարտ
Սնգողդոջ կանդնած էլ չի շնչում,
Լոին խոկում են երկինք, գետ ու արտ,
Եւ ոչ մի շարժում, ու ոչ մի հնչիւն...

Ես կանգնած եմ լուռ, անչար է հոգիս,
Թախիծ խաղաղ, անուրջի նման.
Էլ չեմ անիծում ցաւերը կեանքիս,
Էլ չեմ արտնջում վիճակիցս ունայն...

1903

ԱՇՆԱՆ ԵՐԳ

Ցրտահա՛ր, հողմավա՛ր,
Դողացին մեղմաբար
Տերեւները դեղին,
Պատեցին իմ ուղին...

Ճաճանչները թոշնան...
Կանաչներս աշնան—
Իմ խոհերը մոլար՝
Ցրտահա՛ր, հողմավա՛ր...

Կրակներս անցան.
Ցուրտ ու մէգ է միայն...
Անուրջներս երկնածին
Գնացի՞ն, գնացի՞ն...

1906

* *

Սիրտս ցաւում է անցած գնացած օրերիս համար,
— Մէկը շառկով պատմում է կամաց,
Մէկը իմ հոգին տանջում է յամառ:

Այդ յուշերի մէջ կայ մի քաղցր ցաւ, մի թովիչ երազ.
— Մէկը իմ սիրտը փշրելով անցաւ,
Ու հեզնութիւնով նայում է վրաս:

Սակայն չեմ կարող ես նրան ատել—սիրում եմ նրան.
— Իմ կեանքը մի նուրբ մշուշ է պատել,
Գուրգուրում է ինձ մի լոյս հանգրուան...

Մէկը իմ սիրտը փշրելով անցաւ, 0', քաղցր արբանք՝
— Օրհնուած էք դուք, սէր, ցնորք ու ցաւ,
Օրհնուած էք դուք, երկիր, երգ ու կեանք...

1905/6

ԱՆՇԱՆ ՕԹ ԱՂՋԿԱՆ

Ճոյմն էր մեռնում, օրը մթնում.
Մութը անից տուն էր մանում.
Ես տեսայ քեզ իմ ճամբի մօտ,
Իմ մտերիմ, իմ անձանօթ:

Աղբիւրն անուշ հէքեաթի պէս,
իր լոյս երգով ժպտում էր մեղ.
Դու մօտեցար մեզմ, համրաքայլ,
Որպէս քնչքոյշ իրիկուայ փայլ:
Անակնկալ բախտի նման,
Յայտնուեցիր պայծառ—անձայն.
Անջատուեցինք համբ ու հանդարտ.
Կեանքի ճամբին մի ակնթա՛րթ...

1903

ԱՇԽԱՆ ՄԵՂԵԴԻ

Թշուն է, անձեւ... Ստուերներն անձեւ
Դողում են դանդաղ... Պաղ, միապաղաղ
Անձրեւ ու անձրեւ...
Սիրտս տանջում է ինչ որ անուրախ
Անհանդստութիւն...
Սպասիր, լսիր, ես չեմ կամենում
Անցած լոյսերից, անցած յոյզերից
Տառապիւ կրկին.
Նայիր, ա՛խ նայիր՝ ցաւում է նորից
Իմ հիւանդ հոգին...

Անձրեւ է, աշուն...ինչո՞ւ ես յիշում,
Հեռացած ընկեր, մոռացած ընկեր,
ինչո՞ւ ես յիշում:
Դու այնտեղ էիր, այն աղմկահեր
կեանքի մշուշում...
Դու կեանքն ես տեսել, դու կեանքն ես յիշում —
Ուկէ տեսիլնե՛ր, անուրջների լո՛յս...
ես ցուրտ մշուշում.
Իմ հոգու համար չկայ արշալոյս—
Անձրեւ է, աշուն...

1906

* *

Ինձ թաղէք, երբ կարմիր վերջալոյսն է մարում,
Երբ տխուր զգուանքով արեգակը մեռնող
Սարերի արծաթէ կատարներն է վառում,
Երբ մթնում կորչում են ծով ու հող...

Ինձ թաղէք, երբ տխուր մթնշաղն է իջնում,
Երբ լոռում են օրուայ աղմուկները զուարթ,
Երբ շողերն են մեռնում, ծաղիկները ննջում,
Երբ մթնում կորչում են լեռ ու արտ:

Իմ շիրմին դալկացող ծաղիկներ ցանեցէք,
Որ խաղալ ու հանգարտ մահանան.
Ինձ անլաց թաղեցէ՛ք, ինձ անխօս թաղեցէ՛ք.
Լոռութի՛ւն, լոռութի՛ւն, լոռութի՛ւն ահսահման...

1905

* *

Բիւր մարդոց մէջ,

Պաղ մարդոց մէջ,

Որպէս տրտում

Անապատում —

Մենակութի՛ւն

Մենակութի՛ւն :

Ա՛խ, այս տրտում

Երկրի ցրտում

Անլուր ընկան

Անխօս հանգան

Երկնքի յուշ

Երգերս անուշ :

Եւ իմ հոգում

Ցուրտ ու միգում,

Խինդը մեռաւ

Բախտը մարտ

Անվերադա՛րձ

Անվերադարձ...

1908

ԹԱՓԱՌԱԿԱՆ

ՕՆՆԻԿԻՆ

Նորից կը թողնեմ քաղաքն աղմկոտ

Ու ճամբայ կ'ընկնեմ յաւէտ միայնակ.

Անխօս կը մարի երեկոն աղօտ,

Կը պառկեմ գաշտում կանաչ ծառի տակ:

Կը մռնամ հեռուի աղմուկը ահեղ,
Կը զգամ համբոյրը ուրիշ օրերի,
Լոյս երազների դիշերը չքեզ
Սրտիս անծանօթ վայելք կը բերի...

Հեռաւոր մարդոց ցաւերը կը զգամ,
Կարկաչող ջրի լացը կը լսեմ.
Հողը կը գրկեմ, ջերմ կը հեկեկամ,
Վառ աստղերի հետ անուշ կ'երազեմ:

Անտուն անցորդից կը խնդրեմ ես հաց,
Պայծառ աղբիւրի ջուրը կը խմեմ,
Լայն երկնքի տակ հաշտ ու սրտաբաց
Բնքոյց ծաղկանց հետ խաղաղ կը քնեմ...

1907/8

Կ Ա Ր Օ Տ

Իմ անվերջ ճամբի տանջանքից յոդնած՝
Ես ննջել էի ոսկեղէն արտում.
Ու ճչաց սիրսո վայելքից յանկարծ
— Թուաց որ մէկը կանչում է տրտում...

Եւ ես արթնցայ խնդութեան ցաւից.—
Գիշերուայ հովն էր լալիս դաշտերում,
Մութ հեռաստանն էր գժկամ նայում ինձ,
Մենակութիւնն էր քարի պէս լռում...

1905

Լ Ո Ւ Ս Ո Տ

Հմայուած լուսնի շողերովն արծաթ,
Սրտում փայելով անսովոր մի տենչ,
Աւրուականօրէն շրջում է անվերջ
Տարօրէն լրին լուսնոտը գունատ:

Լուսնի շողերը թովիչ—խուսափող
Ստուերիդ նման եւ հեռու, եւ մօտ,
Ես մի լուսնահա՛ր, ես մի խենթ լուսնո՛տ,
Դու ցո՛ւք, զու ցնո՛րք յաւիտեան խաբող:
Իմ մէջ սառել է հիւանդ մի կարօտ
Եւ չգտնելու տանջանքը մաշող,
Ես մի լուսնահա՛ր, զու լուսնկայ շո՛ղ,
Դու յաւերժաբար եւ հեռո՛ւ, եւ մօտ...

1906

Լ Ր Ա Ժ Ե Շ Տ

Դու գնում ես՝ չգիտեմ ուր,
Լուռ ու տխուր,
Հեղ գունատուող աստղի նման:
Ես գնում եմ տրտում — մենակ,
Անժամանակ
Ծաղկից ընկած թերթի նման:
Դու գնում ես՝ չգիտեմ ուր,
Սրտակտուր
Լացը պահած իմ հայեացքից:

Ես գնում եմ լուռ—անտրառում.
Բայց իմ սրտում
Տաւ է անվերջ, մահո՞ւ կոկիծ...
1904

Ի Ր Ի Կ Ն Ա Ժ Ա Մ

Շուտով կը լոէ աղմուկը դաժան
Ու սիրալս կը զգայ քայլերդ փափուկ.
Դու նորից կ'իջնես, նուրբ իրիկնաժամ,
Քո խաղաղ մութով գգուող—խուսափուկ:

Տիուր թեւերդ անձայն կը փոխ,
Կը գրկես հողը կանացի նազով,
Երկընքում անուրջ աստղեր կը վառիս,
Կը լցնես հոգիս անուշ երազով:

Յուրտ ցերեկներից յաւիտեան դժգո՞հ
Սիրտս կարօտ է քո գգուանքներին.
Դու ինձ չես խարում, քնքոյշ երեկոյ,
Անուշ երեկոյ, մեղմ ու մտերիմ...

Կը նստեմ անվերջ, կը նստեմ մենակ.
Դու կը փարուես ինձ թեւերով ճկուն,
Քնքոյշ կը զգուես յոյս ու յիշատակ,
Կը պարզես մեղմիկ ցոլքըդ իմ հոգուն:

1907

Ա Ն Զ Ա Տ Ս Ա Ն Ե Ր Գ

Դու ո՞նհոգ նայեցիր իմ վրայ
Ու անցար քո խաղով կանացի.
Ես քեզնից դառնացած հեռացայ,
Ես քեզնից հեռացայ ու լացի...

Իմ հոգին ծովերում անձանօթ
Մենաւոր ու մոլոր մի նաւակ,
Մատնեցի փոթորկին աղմկոտ,
Ցուսաբեկ, թողած ղեկ ու թիակ...

Ինձ հեռւից լոյս փարսս չի կանչում,
Չի ժպտում ինձ խաղաղ հանգրուան.
Միայն հողմն է տիսուր շառաչում,
Անթափանց մէգ - մշուշ է միայն...

1905

Ճ Ն Ո Ր Ք

Նա ունէր խորունկ երկնագոյն աչքեր,
Քնքոյշ ու տրտում, որպէս իրիկուն.
Նա մի անձանօթ երկրի աղջիկ էր.
Որ աղօթքի պէս ապրեց իմ հոգում:

Նրա ժպիտը մեղմ էր ու դողդոջ,
Որպէս լուսնեակի ժպիտը տիսուր.
Նա չունէր խոցող թովչանքը կնոջ. —
Նա մօտենում էր որպէս քաղցր քոյր...

իմ յուշերի մէջ ամենից պայծառ ,
իմ լքուած սրտի մաքուր հանգրուան
Քոյր իմ ; գու չկաս , քոյր իմ , գու մեռար ,
Ու քեղ հետ հոգուս լոյսերը մեռան . . .

1904

•

Թողիչ քնքութեամբ հանգչող աշխարհում
Երեկոն վառեց լոյսեր զգունակ.
Մութը հիւսում է արտմութեան ժանեակ,
Ծալիկներն անուշ բայր են բուվառում.
— Իմ սիրաբ արտօնմ, իմ սիրաբ մենակ...

Մեռած լրունեակը մենակ ու ազօտ
Սփռում է շուրջը իր շողերը ցուրտ.
Յաւէտ լրում է մի տիսուր խորհուրդ,
Վառում է յաւէտ մի անանց կարօտ.
— Սի՛րտ իմ ցնորսող, սի՛րտ իմ անյագուրդ...

Տիմուր ու մենակի լուսնեակն է վառում, —
իմ սիրան է լալիս մենակ ու ցառտ.
Լուսնեակն արեւի ըստւերն է աղօտ,
Արեւի ցոլքն է լուսնեակը տրաում,
— Փառքիդ բառւերն է իմ կեանքը կարօտ:

1907

Վ Ի Շ Ի Ե Զ Ե Ր Ք Ի Ն

Աւանդնդիր եղայ հողմի խենթ երգին,
— Անամոք ցաւիր սրամաշը ևկ նուագ.
Կանգնած եմ մռայլ վիճի եղերքին,
— Տրառւմ է հոգիս, հիւանդ ու մենակ...

Անվերջ մի ցաւ է իմ սիրտը ձնշում,
— Ես մոռացել կմ արեւի ուղին.
Անուրջ օրերի լոյսը չեմ յիշում,
— Ինձ ո՞վ է մատնել այս մառախուղին. . .

Ունկնդիր եղայ հողմի խենթ երգին .
— Ես էյ եմ ուզում հեկիկալ անյագ .
Կանգնած եմ մոայլ վիճի եղերքին ,
— Տրտում է հոգիս , հիւանդ ու մենակ ...

1904

S U N T R 9 0038

Կապոյա երկնքի սակեղն աստղե՞ր ,
Զեր հեռւից դուք միշտ տեսնում էք նրան .
Ասացէ՞ք , արդեօք նա էլ թախծո՞ւմ էր ,
Արդեօք տրտո՞ւմ էր նա էլ ինձ նրման :

Խորհրդագիտականեր, զուք տեսնում էք միշտ.—
Արդիօք մինա՞կ էր նա էլ ինձ նըման,
Թէ ընկեր գտած ժամառում էր անվիշտ
Եւ փայփայում էր, և սիրում նրան:

Խորհրդագէտնե՞ր, զուք ժպառւմ էք լուս,
Դուք լուս ժպառւմ էք իմ ցաւի վըբայ.
— Եա քեզ մռացած՝ վաղուց ամենուր
Ծաղրում է քո խենթ խօսքերը հիմա...

Շիրակ 1905

Հ Ր Ա Շ Ք Ա Ղ Զ Ւ Կ

Հրաշք-աղջիկ, գիշերների թագուհի,
Ճառագայթող քո աչքերով զու եկար,
Ուկէ բացով լցրիր հոգին իմ տկար,
Հրաշք-աղջիկ, ցնորքների դիցուհի....

Կախարդ լուսնի հրապուրող շողի պէս
Դու ժպացիր գուրգուրանքով սեթեւեթ,
Աղատ սիրալս շղթայեցիր առյաւէտ,
Հրաշք-աղջիկ, դու, միշտ յաղթող ու միշտ հեղ:

Դու մի ցաւոտ հիացումի երգ գիտես,
Քո ժպիտում կայ խորհուրդի մի փայլանք,
Քո աչքերում կայ մի անանց զմայլանք.
Դու չըմեռող մի վայելքի խօսք գիտես...

Հրաշք-աղջիկ, անյայտ երկրի մանուշակ,
Գիշերային արեգակի ճառագայթ,—
Դու իջնում ես, կարող, որպէս մահու խայթ,
Բնիքոյշ, որպէս անդարձ բախտի յիշտակ...

1906

* * *

Որպէս ծաղիկն է անխօս գունատւում
Յուրա շըւաքի մէջ արեւից հեռի,
Այնպէս թող սէրը մեռնի իմ սրտում,
Որ քաղցր կեանքիդ տիրանքը չբերի...

Ես լուս կը թաղեմ իմ ցաւը միակ,
Զուարիթ կը ժպաամ բախտաւորի պէս,—
Երբեք չեմ բանայ սրտիս մութը փակ,
Երբեք չեմ յայտնի իմ տանջանքը քեզ,
Որ պայծառ ժպաաս կեանքի երեսին,
Որ ոչ մի տրաունջ սիրտդ չյուղէ,
Որ չըմտորես իմ ցաւի մասին,
Որ քո թունաւոր խօսքը չը կասէ...

* * *

Քո աչքերի գէմ իմ աչքերը՝ կոյր,
Կայ քո հոգու մէջ անթափանց մի մութ,
Քո մութ հայեացքում կայ մի քնքոյշ սուտ,
Քեզ միշտ թագինող մի նուրբ վարագոյր...:

Փակ են քո սրտի հեռուներն իմ գէմ,
Յաւէտ քեզ կապուած՝ քեզ օտար եմ ես.
Երբ խենթ խնդութեամբ փայփայում եմ քեզ՝
Եւ սիրում եմ քեզ եւ քեզ չը գիտեմ:

Փակ են քո սրաի հեռուներն իմ գէմ,
Քո աչքերի գէմ իմ աչքերը՝ կոյր,
Քո հոգու վըրայ կայ մի վարագոյր, —
Ո՞վ ես զու, ո՞վ ես. — Բնաւ չը դիանմ...

1904/5

* * *

Դու գեռ չես մեռել իմ հիւանդ սրտում,
Դու գեռ ապրում ես երազի նման.
— Բայց չէ՞ որ միշտ էլ երազ էր միայն
Պայծառ պատկերըդ այս անապատում...

Ես քեզ սիրում եմ, գու գեռ չես մեռել,
Ես ամենուրեք քեզ եմ որոնում.
Դո՛ւ, երազների լուսէ որրանում
Անո՛ւրջ, որ գուցէ բնաւ չես եղել...
Քեզ իմ կարօտի կոկիծն է վառել
Երազանքներում իմ նուիրական.
Իմ քոյր, իմ դահճ, իմ սուրբ սիրեկան,
Ես քեզ սիրում եմ, գու գեռ չես մեռել... .

1908

* * *

Ես անջատուած եմ հայրենի հողից,
Հայրենի առւնըս՝ իմ սրաին օտար.
Ինձ այրում է միշտ մի անյագ թախիծ, —
Ծաւիտեան դիւթող անյայտ ճանապարհ... .

Յուղում են, հոսում հեղեղները մեծ,
Մաղցում վերեւ եւ թաւալում ցած.
Զմրուխտէ ջրեր, ձեղ ո՞վ վրդովեց,
Հայրենական տո՛ւն, յաւէտ մոռացուած...

Միեւնոյն է ինձ Հիւսիս թէ Հարաւ, —
Մի իննթ տագնեապ կայ իմ հիւանդ սրտում,
Դայ իմ հոգու մէջ մի անյագ ծարաւ.
— Յաւիտեան օտար, հայրենակա՞ն տո՛ւն... .

1908

* * *

Տիսուր մեռան կապոււատչայ
Երազները երկնաշող. —
Գագաթներից ես ցած իջայ
Անդունդները սիրտ մաշող... .

Էլ ոչ մի թեւ ինձ չի տանի
Դէպի բարձունքն արծաթեայ.
— Իննթ անկումիս գերեզմանի
Խաւարներում ինձ գթա'... .

Ցուրտ է դարձեալ, մութ՝ իմ ուղին,
Սրտումս մահ եւ աշուն.

Մոռացել եմ ես ամենքին,
Միայն քեզ եմ ես յիշում... .

Միայն քեզ եմ ես աղօթում,
Քո հրաշքին անպատիր. —

Յայտնուի՛ր սեւ անապատում —
Ամոքլ՛ր ու աղատի՛ր... .

1905/7

* * *

Կրկին հնչում է թունաւոր լեզուդ
Եւ քո խօսքերի նիզակները սուր,
Եւ քո համբոյրը, որպէս քաղցր սուտ.—
Բախտ են խոստանում ի զուր եւ ի զուր... .

Իմ մէջ մարել է մի լոյս արեգակ,
Մահու գիշերն է մթնել իմ հոգում,—
Մի՞թէ զու պիտի վառես նոր փափաք,
Մի՞թէ զու պիտի հրդեհս յուզում... .

Կանգնել ես, որպէս անյաղթ հրապոյր
Մօտեցար ահա կարող ու խոնարհ,
Մթնում բորբոքուեց մի արնոտ համբոյր,
Մեղքի պէս թովիչ, ցաւի պէս խելառ:
Օձեղէն մարմնով փարուել ես կրծքիս,—
Եւ քո ցանկութեան ահեղ փոթորկում
Անէծք' է թափում անկարող հոգիս
Եւ անյոյս ճշում քո թունոտ գրկում... .

1908

* * *

Երբ պայծառ օրըդ տիսուր կը մթնի,
Եւ սիրտդ կ'այրէ թունաւոր կասկած,
Վհատ սոսկումի տանջանքով կը զգաս,
Որ սրբնածք բնաւ չես գտնի... .

Բայց զու կը գնաս, օ՛, զու չես կանգնի,
Վերջին լոյսերը մեղմ կը վախճանին,

Վերջին յոյսերըդ կը գաւաճանին,—
Դու սրբնածք բնաւ չես գտնի... .
Եւ երբ չի մնայ ոչ մի յոյս գաղանի,
Սիրաբըդ կը ճշայ, արդիօք ո՞ւր ես, կա՞ս,
Հոգը կը դրեհս եւ կը հեկեկաս.—
Ո՞չ. — կ'արձագանգուի. — Բնաւ չես գտնի... .

1907

Գ 1 Տ Ս Ղ

Մանկութ ընտրեցի ձամբորզական յուրական
Թողի հայրենի անակըս աւեր.—
Ահա ես հիմա մի մոլոր ասուալ,
Ես կոյր եմ հիմա, մուալ ու անսէր:
Պայծառ ըղձերը ինձ զուր մաշեցին,
Զը ողջունեց ինձ ոչ մի արշալոյս,
Ինձ լուս մասացան, ինձ չը յիշեցին,
Իմ սրտում մեռան սէր, ցնորք ու յոյս:
Ես կոյր եմ հիմա, անբախտ ու մենակ—
Յաւերժում կորած մի մոլոր ասուալ.
Սահում է կեանքը հիւսելով ժանեակ,
Սացնում եմ վիհեր, լիսներ երկնահուալ,
Ինձ հումար չը կայ ժամ ու ժամանակ,
Ես մի մոլորուած, մի տիսուր ասուալ... .

1907

* * *

Անանց կարօտն է իմ սիրտը անջում
— Արդեօք ո՞ւր ևս զու, արդեօք ո՞ւր ևս զու.
Յո անուշ ձայնն է հնչում ու կանչում,
— Բայց զու անհաս ևս, յաւիտեան հեռու...
Ելնում եմ դարձեալ անվերջ ճանապարհ,
— Կը ժպտա՞ս արդեօք, լուսեղէն երազ.
Կը ցրե՞ս սրտիս թախիծը խաւար,
Կը նետե՞ս անուշ ցոլքերըգ վրաս...
Թափասում եմ ու կարօտով կանչում,
— Արդեօք կը դտնե՞մ աշխարհում անհուն, —
Բոլոր խօսքերում քո ձայնն է հնչում,
Բայց անյայտ ևս զու, զու չունես անուն...
1908

ՑԱՆԿՈՒԹԻՒՆ

Յո հայեացքը մոգական
Բորբոքում է քաղցր դող, —
Պարուրի՛ր ինձ կուսական
Յուզումներով քո դիւթող:
Ինձ փաթաթիր որպէս ամպ՝
Մութ աչքերը մեղմ փակի՛ր,
Ժամանեալ կրտսեամբ,
Սանցաւ կեանքըս խորտակի՛ր...

Արիւնոտի՛ր շուրթերն իմ,
Սիրտըս խայթի՛ր, ծիծաղիր.
Թող աչքերըս հեղ մեռնին,
Կւանիքս մարի՛ր ու փախի՛ր:
Յո հայեացքը մոգական
Բորբոքում է քաղցր դող, —
Պարուրիր ինձ կուսական
Յուզումներով քո դիւթող...
1906

* * *

Կայ խորհրդաւոր մի հրապուրանք
Յո շարժումների անխօս զրոյցում.
Ինչ որ օձային ինքնահիացում
Եւ գէպի հողը ինչ որ քամահրանք:

Մի այլ երկրային երաժշտութեան
Ելեւէջների պշրանքն եմ յիշում,
Յո շարժումները ազօթք են շարժում,
Յո շարժումները եւ կան եւ չը կան...

Երկրում են մնուած, բայց ոչ երկրային
Արեցումներ են նոքա խոստանում,
Մի այլ տանջանքի եղեմ են տանում,
Մասնելով հոգիս չարքերի խաղին...

Հ Ր Ա Ժ Ե Շ Տ Ի Խ Օ Ս Ք Ե Ր Ի Ց 8

Ոչ արտո՞ւնջ, ոչ մրմո՞ւնջ սկաւոր,
Հեռացի՛ք, մոռացի՛ր ինձ յաւէտ.
Իմ ուղին միշտ մթին, մենաւոր,
Կը գնամ իմ զմկամ ցաւի համ:

Իմ ճամբա՞ն անվախան մի գիշեր,
Ինձ շոյող ո՞չ մի շող չի ժպտայ. —
Հեռացի՛ք, մոռացի՛ք, մի՛ յիշիր,
Ինձ այդպէս քրոջ պէս մի՛ զթա...

Յուսաբեկ, մութ ու մեգ թող լինի,
Իմ վերեւ թող արեւ չը խնդայ.
Լոկ երկունք, լոկ արցունք թող լինի,
Ինձ այդպէս, քրոջ պէս մի զթա... .

1905

* *

Իմ զերեզմանին զուք չը մօտենաք.
Հարկաւոր չէ ինձ ոչ ծաղիկ, ոչ սուզ.
Յանկարծ կը զարթնի ջերմ լալու փափաք
Սիրաւո չի գտնի ոչ մի արտասուք:

Իմ զերեզմանը թող լինի հեռաւում.
Ուր մահացել են շուկ, երդ ու ձայն,
Թող շուրջըս փառւի անանց լուսթիւն.
Թող ինձ չը յիշեն, թող ինձ մոռանան:

Իմ զերեզմանին զուք չը մօտենաք,
Թողէ՛ք որ հանգչի իմ սիրաւ յոգնած,
Թողէ՛ք, որ լինեմ հեռաւոր, մենակ, —
Չը զգամ որ կայ սէ՛ր եւ ցնո՛րք եւ լա՛ց... .

1904

Ա Շ Ն Ա Ն Ե Ր Գ

*Il plure dans mon coeur
Comme il pleut sur la ville...*

PAUL VERLAINE

Կրկին իմ հոգում
Խաւ մշուշոտ, արցունք անձրեւող
Տրաում իրիկուն.
Իմ օրտում անցաւ
Մահացող ծաղկանց բոյրը ցաւ բերող,
Համբոյրը խոնաւ.
Կը կին սլաղ միզում
Ամպոտ երկինքը մեռած լոյսերի
Թաղումն է սգում,
Հողմը սրարշաւ
Հովուս գալկացած ծաղիկ յոյսերի
Թերթերը տարաւ...
Անջատման ցաւոս
Զայներ դոզացին ու հեղ գալկացան
Հեռում անծանօթ.
Կրակներն անձայն

Լացող ամպերի միգում անսահման
Թոշնեցին, անցա՞ն . . .
Սնձրեւն անընդհատ
Մաղում է վհատ թաղումի կոծով,—
Տիտր, յուսահատ . . .
Իմ հոգու մէջ է՛լ
Աշուն է իջել անամոք լացով,
Իմ հոգու մէջ է՛լ . . .

1907

* *

Խաղաղ զիշերով գու կը գաս ինձ մօտ,
Քնքոյշ ձեռները և կը չհամբուրեմ,]
Կը ցրեմ կեանքի յւշերջ ցաւստ
Ու հէքեաթս յիւ բայսերէ կը վառեմ . . .

Երկար մազերը կ'արձակես աղատ,
Հիւանդ զլուխըդ կը դնես կրծքիս,
Կը լինես քնքոյշ, մօտիկ, հարազա՞տ,—
Անուշ խօսքերով կը դիւթես հոգիս . . .

Պայծառ աշխարհում կը լինենք մենակ,
Ցաւ կեանքի մեռնող լոյսերից խարուած,
Կ'երազենք անյուշ, անվերջ ու անյագ,—
Հէքեաթ աշխարհում առ յաւետ կապուած . . .

1906/7

Մ թ Ն Շ Ղ Ա

Ես սիրում եմ մթնշաղը նրբակերտ,
Երբ ամէն ինչ երազում է հոգու հետ,
Երբ ամէն ինչ, խորհրդաւոր ու խոհուն,
Յնորում է կապոյա մութի աշխարհում . . .
Զը կայ ոչ մի սահման դնող պայծառ չող,
Աղմուկի բեռ, մարգկային զէմք սիրտ մաշող .
Հիւանդ սիրտը չի տրանջաւմ, չի ցաւում,
Որպէս երազ մոռացումի անձաւում,
Եւ թւում է, որ անեղր է ամէն ինչ —
Որ ողջ կեանքդ է մի սննահման քաղցր նինջ . . .

1904/^F

* *

Եերեկը լոեց . . . երկինքը վառեց ոսկէ բուրվառներ .
Լոյսերը քնքոյշ գրկեցին անուշ երկինք, ծով ու հող .
— Ա՛խ, եթէ մէկը իմ հոգին այդ մեղմ լոյսերին խառնէր
Եւ փայփայէր իմ յոդնատանջ սրաի թախիծը մաշող . . .

Լքուած իմ հոգին տանջում է կրկին տանջանքը մոայլ .
Եւ անուն չունի տանջանքը սրախս, տենչանքը գաղտնի .
— Ա՛խ, եթէ մէկը իմ սրախն նետէր նոր յոյսերի փայլ,
Մեղմաբար ասէր, քնքոյշ համողէր, որ նա կը գտնի . . .

LԻՒԱՆԴ

Քնքոյշ երազով պաճուճիր հոգիս .
 Նստիր մահմիս մօտ ու տխուր երգիր ,
 Մազերըդ փոխիր յոգնատանչ կրծքիս
 Ու մեղմ փայտայիր սիրաըս տարագիր :

 Օտար դաշտերի անանց մշուշում
 Տխուր լոռութեան գիշերն է իջել .—
 Իմ սիրաը յաւէտ թախիծն է մաշում ,
 Մի լուսէ երգ է իմ հոգում ննջել ...

 Քո պայծառ գահից մեղմօրէն իջիր ,
 Մազերըդ փոխիր յոգնատանչ կրծքիս ,
 Անուշ երազով սիրաըս պաճուճիր ,
 Յնորք յուշերով ամոքիր հոգիս ...

1907

**

Չարտասանուած տխուր խօսքեր ,
 Որ զողում էր անպատասխան ,
 Ես սիրում եմ , տխուր խօսքեր ,
 Զեր թրթիոը կախարդական :

 Խենթ յուզումի անուշ խօսքեր ,
 Պազը մարդոցից խորպահուած ,
 Անջատման պէս տխուր խօսքեր ,
 Հոգուս լոյսեր մթնշաղուած ...

Դուք այրում էք , սիրոյ խօսքեր ,
 Կարօտիս պէս սիրաըս մորմոք ,
 Զեզ չի զգուի , տխուր խօսքեր ,
 Ցուրտ աշխարհում ոչ ոք , ոչ ոք ...

Չարտասանուած տխուր խիսքեր ,
 Դուք չէ՛ք մեսել , զուք չէ՛ք մեսնի ,
 Դուք այրում էք սիրոյ խօսքեր ,
 Որպէս խայթը սեւ եղեսնի ...

1904

ՍԵՆՏԻՄԷՆՏԱԼ ԵՐԳ

Արգեօք յիշո՞ւմ ես . անտառ էր , առու
 Հէքութի պէս էր — Երազի նման .
 Խաղաղ երեկոն խօսում էր անձայն ,
 Արգեօք յիշո՞ւմ ես — Հեռո՛ւ էր հեռո՛ւ .

Արգեօք յիշո՞ւմ ես . երկիրը պայծառ ,
 Փատում էր սիրով յաւիտենական .
 Գարունն էր երգում ձայնով իւթական ,
 Արգեօք յիշո՞ւմ ես . առու էր , անտառ ...

Արգեօք յիշո՞ւմ ես . գիշերն էր գալու ,
 Հէքեաթի պէս էր ... Անտառ էր , առու ...
 Արգեօք յիշո՞ւմ ես . հեռո՛ւ էր , հեռո՛ւ .
 Կեանք , տխուր հովիտ յաւիտեան լալու ...

1905

* *

Ես չը գիտեմ՝ ո՞ւր են աւանում հեռաւոր
Ուղիների ժապաւէններն անհամար,
Ես նստում եմ ճամբի վրայ ամէն օր
Եւ իմ մոլոր ուղիներում, ո՞վ գիտէ,
Գուցէ մի օր դու երեւաս լուսերես.
Գուցէ ժպտաս քո խօսքերով արծաթէ
Եւ մութ սրտիս նոր խնդրութեան լոյս բերես;

Օձանման ոլորումով հեռախոյս
Ինձ կանչում են ուղիները բիւրաւոր.
Արդեօք ո՞ւր ես, խորհրդաւոր արշալոյս,
Հանիպումի երջանկութեան պայծառ օր... .

1908

Ե Ր Ե Կ Ո Յ

Երեկոն փոեց իր թեւերը մութ,
Անուշ նիրհեցին երկինք ու երկիր,—
Աչքերը փակիր, ինձ քնքոյշ գրկիր,
Սուտ կեանքին խառնիր երազանքը սուտ:

Լայն ըստւերները ընկան անաղմուկ,
Անուշ նիրհեցին ծով, անտառ ու լիո...
Ես քեզ կը պատմեմ ոսկէ հէքեաներ,
Իմ որուն մանուկ, իմ քնքոյշ մանուկ... .

33

Կրծքիս զիր դէմքը քո տիրագալուկ,
Մոռացիր կեանքի տառապանքը մութ,
Սուտ կեանքին խառնիր երազանքը սուտ,
Իմ սիրուն մանուկ, իմ քնքոյշ մանուկ...
Անուշ նիրհեցին ծով, անտառ ու լիո,
Ննջեցին անուշ երկինք ու երկիր.
Աչքերը փակիր, ինձ քնքոյշ գրկիր,
Ես քեզ կը պատմեմ ոսկէ հէքեաթներ... .

1908

* *

Դու քնած ես քո տաքուկ անկողնում
Եւ արեւ բախտի երազ ես տեսնում.
Դուրսը բքաբեր քամին է ոռնում,
Դուռ ու լուսամուտ ձիւնով է լցնում... .

Դու քնած ես քո տաքուկ սենեակում,
Իսկ ես ցուրտ ձմրան բուք ու հողմի մէջ
Խենթ հեկեկանքով գոներն եմ թակում,
Թո փակ գոները անվերջ ու անվերջ:

Դու ինձ չես տեսնում լուսէ երազում,
Դու ինձ չես լուսմ ձմրան փոթորկում,
Ես մութ գիշերում քեզ եմ երազում,
Բուք ու հողմնորում ես քեզ եմ երգում... .

1907

իմ մոլոր ճամբին դու յանկարծ իջար
Քո զիշերային մեղմաշունչ մութով
Եւ զարդարեցիր քո անուշ սուտով
Իմ տխուր կեանքի մշուչները չարէ
Սրինգէ ճայնըդ հնչեց մութերում
Աղբիւրի նման զուարթակարկաչ.
Գարնան խօսքերով կարմիր ու կանաչ
Դու ինձ կանչեցիր զէպի քո հեռուն։
Ուրիշ ափերի թովիչ ճայնի պէս,
Քո շարժումները ուրուականային
Մտուերապաճոյն իրիկնապահին
Շղթայեցին ինձ օղակով անտես...
Իրար ճուլուեցին իմ մէջ մահ ու կեանք,
Հոգիս մանեցի քո մառախուղին,
Ընդմիշա օրհնեցի անհաստատ ուղին,
Ուր փարոսում ես զո՞ւ, քաղցր պատրանք...
1908

* * *

Սեւ զիշերն իջաւ իր անյայտ գահից
Եւ մութով լցրեց երկինք ու գետին, —
Խաւարեց հեռում փարոսը յետին. —
Սասանում եմ ես զերի ահից:
Շողում են, զողում ազմուկով զուարթ,
Անխօս քարանում ու նորից խաղում,
Անդունդից ելնում, զէմքիս ծիծաղում,
Խուլ շառաչում են — լարում են թակարդ...

Նաւը ճեղքում է ջրի հայելին,
Իր ցուրտ աչքերով ծովն է նայում ինձ,
Կտրուած եմ ես երկնից ու հողից.
Իր թելն է մանում անխուսափելին։
Գերի է նաւը անակնկալին,
Մութով կտրուած երկնից ու հողից...
1907

* *

Հեռաւոր, անել լիսնազագաթներ,
Պայծառ արեւի զահեր հիասքանչ,
Սիրալս մեռնում է, լիսնազագաթներ,
Ներքեւում նիրհող զաշտերում կանաչ։

Իմ երազները ձեր գիրկն են թոշում —
Բա՛րձր, զէպի վե՛ր, արեգակին մօս,
Ուր իննթ բոցերի խուրձեր զողզոջուն
Լուռ թալկանում են երկնում անազօտ։

Հեռո՞ւ, օ՛, հեռո՞ւ այս ունայնաշունչ
Տխուր դաշտերից, հանդարտ ու անկեանք. —
Գրկի՛ր ինձ անել զագաթների շունչ,
Սիրալս բորբոքիր, բարձրութեան բերկրանք. —

Թող իմ աչքերը լոյսից կուրանան,
Թող սիրալս լցուի արեւի բոցով. — 0',
— 0', երջանկութիւն անել բարձրութեան,
— լուսեղէն երկնի անեղական ծո՛վ...
1907/8

Ա Ղ Օ Թ Ք

Քո պայծառ զանի անհաս բարձունից
Մի մերժիր սրիս աղօքը անբիծ...
ՍԱՅԹ

Ես ընկայ անդունդները խաւար,
— իմ ցնորք, նորից քեզ եմ կանչում:
Մոռացայ ուղիներըս պայծառ,
իմ սրառում գառը մութն է շնչում:
Դու անմութ աշխարհում ես ապրում,
Յիշի՛ր դու խաւարում տանջուողին,
Քո սրառում արեւներ են վառում,
Արեւի՛ր սեւ կեանքիս մութ ուղին:
Յաւիտեան ինձ քո սէրն է այրում.
Դու լուսե՛ղ... ինձ խաւարն է ճնշում:
Ես մեռնում եմ այս մութ վիճերում...
Հեռաւո՞ր, քեղնից չեմ արտնջում...

1904/5

*

Մոայլ թաղումի ջահերի նըման
Մէկը աստղերն է վասում տիրութեամբ.
Իմ հոգու վրայ իջել է մի ամպ.
Իմ սրաի պայծառ ծաղիկներն ընկա՞ն:
Հիւանդ քնքութեամբ երկինք է պարզում
Մեռնող ծաղիկը իր բոյրը վերջին,
Իմ ջերմ աղօթքի խօսքերը չնչին—
Հեռաւո՞ր, քեղնից սէր չեն աղերսում:

Իմ սրտում միայն սառած հեկեկանք,
Բայց արցունք չըկայ իմ սեւ օրերում.
Մեռնում է սիրաբս անհուն խաւարում,
Եւ դու կա՞ս արգեօք, լուսէ անրջանք...

Դ Ա Ր Զ

Մի օր առյաւէտ կեանքս կ'անիծեմ
Ու գունատ յոյսի քայլերով տարտամ
Կը գտնեմ ուղին հեռաւոր քո տան
Եւ թոյլ ձեռներով դուռըդ կը ծեծեմ:

Տիաւը կը ժպտաս դու յոգնածօրէն
Ու յոգնածօրէն դուռը կը բանաս.—
Սրախ մութ ցաւը անխօս կ'իմանաս,
Եւ արցունքներով հանդարտ կը ծորին:

Եւ գթութիւնը քո քրոջական
Սիրաբս կը լցնէ խնդութեան լուսով.
Քո սուրբ ծնկները կը գրկեմ յուսով,
Եւ կը հեկեկամ, եւ կը հեկեկամ...

25 Յունուարի, 1908

Զ Մ Ր Ա Ն Գ Ի Շ Ե Ր

Զմրան գիշերն է մեղմօրէն ընկնում
Եւ միծ քաղաքի զէմքը մշուշում.—
Ես գուրս եմ զալիս, փողոց եմ գնում
Եւ երկա՛ր, երկա՛ր մայթերն եմ մաշու...

Բարձր տների պատուհաններում
Պայծառ լոյսերը հանդչում են մէկ-մէկ.
Ես արդէն ոչինչ չեմ մտաքերում
Ինձ համար չըկայ այսօր ու երէկ:
Կէս գիշերն անցաւ... Ես տուն չեմ դնում.
Երկար, անդադար, մայթերն եմ մաշում.
Շրջում եմ անվերջ, երբեք չեմ յոդնում,
Ոչինչ չեմ յիշում, ոչինչ չեմ յիշում...
Լապտերը միգում մազում է պաղ րոց,
Ես աննպատակ շրջում եմ անվերջ.
Ես լուս անցնում եմ փողոցից փողոց
Ու մեղմ լալիս եմ ցուրտ մշուշի մէջ:
Զմեռ. 1907/8

* *

Օտար երկնքի կամարների տակ
Երազիս տեսայ մի չքնաղ աղջիկ.
Ես՝ մի աղքատ մարդ մոլորաշրջիկ,
Նա՝ երկնից թռած լուսէ հրեշտակ...

Ես ընկած էի օտար աշխարհում,
Անարիւ երկնի կամարների տակ,
Մէկը ֆայում էր իմ սիրտը մենակ
Եւ իմ մութ հողում լոյսեր էր վառում:
Մեզմ ու սիրագին ժպտում էր նա ինձ,
Օտար կողմերում, լայն ճամբի վրայ,
Ես լուսմ էի խօսքերը նըրա
Եւ անուշ լալիս իմ անուրջ բախտից...

1906

14 ՏՈՂ

Մոռանա՞լ, մոռանա՞լ ամէն ինչ, ամենին մոռանալ.
Չը սիրել, չը խորհել, չ'ափասալ. — Հեռանա՞լ...
Սյատանջող, այս ճնշող ցաւի մէջ, գիշերում այս անշող
Արդեօք կա՞յ իրիկուայ մոռացման, մոռացման ոսկէ շող...
Մի վայրկեան ամենից հեռանալ, ամենին մոռանալ.—
Խաւարում, ցաւերում քարանալ մին - միայն...
Մոռանալ, մոռանալ ամէն ինչ, ամենին մոռանալ.
Չը սիրել, չը տենչալ, չը կանչել, հեռանա՞լ...

1908

Արդեօք նորից երազնե՞րն են թափառում,
Սիրոյ անուշ նուագնե՞րն են ինձ կանչում.
— Դալուկ աշնան տիսուր շողերն են մարում,
Սարից իջնող աղբիւրներն են կարկաչում:
Ես լուսմ եմ հիացմունքի մի շուկ,
Արդեօք դո՞ւ ես նորից հոգիս մեղմ յուզում.
— Այն գիշերն է, այն յուշերն են արտմաշուք,
Այն առաղերն են ցուրտ երկնքում երազում:
Ես ընկած եմ անծայր զաշուռմ միայնակ,
Ֆրազները՝, երազները՝ որ անցան.
Արդեօք դո՞ւ ես գիշերի պէս հերարձակ,

Դիշերի պէս խորհրդաւոր, դիւթական.
— Դալուկ աշնան մերկ անտառն է շառաչում,
Լոյս յուշերի վտակներն են կարկաչում... .

1905

* *

Սեւ գիշերն է գրկել ինձ, մութն է պատել իմ ուղին
Քեզ եմ կանչում ես նորից, իմ հեռաւոր, իմ անգին... .
Ես մոլորուած մի կրակ, ես անհաստատ մի հոսանք,
Վիճեր, վիճեր անյատակ—տրտմութիւն ու ափսոսանք:
Օտար երկիր, օտար հող, թախիծով լի երազներ,
Անրջանքներ մեղմ մարտ, անվերագարձ հիացքներ:

Քաղցր է մութը քո գրիտոմ, լոյսը սեւ է առանց քեզ,
Այնպէս մեղմ ես զու զգուում, զու յուսեղէն ես այնպէս:

Դու իջնում ես որպէս յուշ, որպէս ուրիշ կեանքի լոյս,

Քո հայեացքում կայ անուշ մեղմութիւն ու արշալոյս:

Սեւ գիշերն է գրկել ինձ, մութն է պատել իմ ուղին
Քեզ եմ կանչում ես նորից, իմ հեռաւոր, իմ անգին... .

1907/8

* *

Դժկամ նայում են ժայռերը խոժոս,
Տխուր խաղում են աշիքները ժիր... .
Ընդունիր հոգիս մոլոր, մինաւոր, —
Վերջին աղօթքիս խօսքը մի՛ մերժիր:

Սողում են դանդաղ օրերը անծիր,
Կորած է մթնում մոլոր իմ ուղին... .
Քնքոյշ խօսքերով թախիծըս ցրիր,
Անխօս ամոքիր ցաւած իմ հոգին:

Մի անմեռ ցայ կայ երկրում այս տխուր,
Մի ցուրտ, հոգեմաշ յուսահատութիւն,
Կորցրած յաւէտ եւ երազ եւ հուր,
Ես վերջին անգամ քեզ եմ աղօթում:
Դժկամ նայում են ժայռերը խոժոս,
Տխուր խաղում են ալիքները ժիր... .
Փայիտիր սիրտըս յաւէտ մենաւոր,
Վերջին աղօթքիս խօսքը մի՛ մերժիր... .

1905

* *

Քո մազերի ցնորսական փայլը պայծառ,
Ժայռից իջնազ ջրվէժի պէս առաստանս.
Քո աչքերի խորութիւնը հրգեհավառ,
Ուր վասուած են մութ ցանկութեան ջահեր անխօս,
Քո ժափիտը թունոտ ծաղկանց բոյրի նըման,
Որ սիրաբար արբեցնելով մահ է բերում,
Քո խենթ մարմնի սարսաւները երջանկութեան
Ախտաբորբոք արեւներ են բոցավասում... .
Թոյլ տուր տուպտեմ քո աչքերի անդունդը մութ,
Թոյլ տուր ծծեմ քո մազերի բուրմունքն անուշ,
Բորբոքիր ինձ քո յոյզերով քաղցր ու անգութ,
Մարիր իմ մէջ, մարիր իմ մէջ ցնորք ու յուշ... .

1905/6

* *

Գիւթեցին ինձ քո մազերը ալեծածան
Եւ աչքերիդ խորութիւնը խորախորհուրդ.
Եւ քո քնքոյշ ժպիտների խօսքերն անձայն
Գիշերեցին իմ հոգու մէջ մի քաղցր մութ...
Դրւթեցին ինձ իրենց խաղով լուսակարկաչ
Քո խօսքերի զանգակները զուարթածայն.
Շուրթերը — վարդ բոցավառուած են իմ առաջ
Ցանկութիւնով արխւնատենչ ու մեղսական.
Մութ ցանկութեամբ ես քո կանչող գիրկն եմ ընկնում
Նետում եմ ցած վեհ բարձունքից հոգիս հպարտ,
Քո գրկում կայ սիրուց անուշ մի հիացում,
Քո խաւարում — մուացութեան մի ակնթարթ...

ՅՈՒՂԵՐԻ ԵՐԿՐՈՒՄ

Կեանքը լոռում է, աղմուկը միոնում.
Մի անձանօթ ձեռք նուրբ մթնչազում
Անցեալն ու ներկան իրար է խառնում,
Իմ սրտում ոսկէ անձրեւ է մաղում:
Մի քնքոյշ լոյս կայ իմ հոգու համար —
Ամէն ինչ ունի չը միոնազ մի կեանք,
Կայ խորհղաւոր գիւթող մի խաւար,
Ուր բախտից քաղցր են տրտունջ ու տիրանք:
Մի քաղցր վիշտ կայ անզարձ անցածում,
Վերյուշերի մէջ — մի անսուտ զրախտ,
Մի անանց վաշելք, անխար հիացում —
Կեանքից գեղեցիկ ցնորական բախտ...

1907/8

ԳԱՐՈՒՆ

Գարունը այնքա՞ն ծաղիկ է վասել,
Գարունը այնպէս պայծառ է կրկին.
— Ուզում եմ մէկին քնքօրէն սիրել,
Ուզում եմ անուշ փայփայել մէկին:
Այնպէս զգուող է երկոն անափ,
Ծաղիկներն այնպէս նազով են փակւում.
— Շուրթը վառուած է մի անուշ տաղնապ,
Մի նոր յուզում է սիրուս մրրկում...
Անտես զանգերի կարկաչն եմ լսում,
Իմ բացուած սրտում հնչում է մի երգ.
— Կարծես թէ մէկը ինձ է երազում,
Կարծես կանչում է ինձ մի քնքոյշ ձեռք...

1908

* *

Կանչում ես անվերջ
Կապոյտ հեռուից.
Շշուկով անուշ
Կանչում ես ինձ:
Թփերն ես շարժում,
Շըշում անուշ
Շշուկով պայծառ
Ու փաղաքուշ...
Անյայտ է ուզին
Քաղցր երկրիդ,
Ուր բախտ է անանց
Անանց ժպիտ:

Ուր ծաղիկ ու երգ
Ուրիշ են, այլ,
Ուր անմահական
Փառք է ու փայտ
Այս իրիկնային
Կապոյտ երկրում
Դու ես միշտ շրջում
Ու մեղմ երգում:
Ու կանչում ես միշտ
Անյայտ հեռուից,
Շշուկով անուշ
Կանչում ես ինձ:

* *

Ապրելուց քաղցր է մեռնել քեզ համար,
Զգալ որ դու կաս եւ լինել հեռու,
Երկրագագել քեզ առանց սիրուելու,
Երազել միշտ քեզ — լինել քեզ օտար...

Ստուերը փնտոնել ամէն տեղ, ուր խենթ
Հոգին կարող է թոխչքով չափեւ.
Անանց կարօտում անվերջ տառապել
Եւ լինել քեզնից բաժանուած յաւէտ...

Ու գերեզմանում եւ հողերի տակ
Զգալ որ անցար եւ քեզ չը կանչել,
Եւ ոչ մի յուշով սիրաըդ չը տանջել,
Ու չը խոսվել բերկրանքըդ յատակ...

* *

Երբ վարդ ամպերի հրդեհն է դողում,
Երիկնաժամին նստում եմ մենակ
Կանաչ առուի մօտ, ուսիների տակ,
Ու յոգնած սիրաըս էլ չի գժզոհում:

Անցած օրերի յուշերն եմ թերթում
Եւ խաղաղ սրտով անխոռվ - մենակ
Քնքոյշ երգերից հիւսում եմ մանեակ
Որ պճնեմ սիրով պատկերդ արտում:

Եւ իմ մութ կեանքի սեւերում դժկամ
Ես գիտեմ, պիտի ժպասս, լուսաւոր,
Պիտի ողջունես ուղիս հեռաւոր.
— Մրբազն երալ, կարօտալի՛ ժամ...

* *

Արդիօք ո՞ւր ես դու... Ա՛խ, արդօք դու ո՞ր
Ճանապարհների հեռուն ես մաշում.
Երջանի՞կ ես, թէ լուռ ու մենաւոր
Մնդարձ օրերի գարունն ես յիշում:

Արդիօք քո որտում ի՞նչ լոյս է փայլում,
Ո՞ր հողն է զգուում քայլերըդ փափուկ,
Ո՞ր ջուրն է արդիօք իր լոյս հայելում
Մեղմով փաղաքում զէմքըդ խուսափուկ:

Արդիօք խաղա՞ղ է սիրտըդ փոթորկոտ,
Արդիօք անցեալի լոյսերը մեռած
Չե՞ն յուզում սիրաըդ, իմ հոգու կարօտ,
Իմ քնքոյշ սիրած, իմ անդա՛րձ երագ...

Ս Ի Ր Ա Հ Ա Ր Ո Ւ Կ Ա Ծ Ը

Դու դնում ես տուն, եւ գեռ քով վերջին
Խօսքի հնչիւնը չի մարել օգում,
Անզօր եմ արդէն այս խենթ կարօտում,
Եւ կամքըս թոյլ է, եւ միտքըս չնչին:

Խենթացած բեռից այս չար մենութեան,
Ես գուրս եմ վազում քեզ որոնելու,
Տեսնելու ցոլքըդ զէթ հեռուից - հեռու
Եւ հսկելու քեզ ստուերի նըման...

Այս մութ ժխորում իմ սիրան է մաշում
Մենակութիւնը յաւիտեան խոցող,

Անցնում եմ արագ ևս ձեր փողոցով
Եւ խենթ մշուշում ոչինչ չեմ յիշում։
Ձեր դռան առաջ կանգնում եմ երկար, —
Գուցէ զու յանկարծ պատահմամբ զուրս գաս,
Կարօսը, զուցէ, զու յանկարծ զգաս
Եւ հասկանաս իմ յուղումը տխուր։
Սակայն ուղում եմ, որ ինձ չը տեսնիս,
Չը գիտեմ ինչո՞ւ ձեր զանգն եմ տալիս,
Փախչում եմ... փախչում... եւ հեռանալիս
Փառարանում եմ, օրհներգում եմ քեզ...»

Ա Ն Ա Ն Ո Ւ Ն Ս Է Ր

Իմաստուն խօսքեր սովորեցի ես,
Որ հրապուրեմ զօրութեամբ մթին,
Հոգիդ կախարդեմ ու հմայիմ քեզ,
Ինձ այրող հուրը նետեմ քո սրտին։
Բայց բոլոր խօսքերն իզուր են արդէն,
Թալիսմանները մեռած եւ անուժ,
Հմայք եւ զիւթանք անզօր են դէմ...
— Արդօք ո՞վ գիտէ անունըդ անուշ...»

Իմ խաղաղ երեկոն է հիմայ
Մեղմալոյս եւ տխուր, եւ անուշ.
Քեզ երբեք սիրաըս չի մոռանայ,
Իմ մաքո՞ւր, առաջին իմ անուրջ...
Տարիներ, տարիներ կը սահեն,
Կը մեռնեն երազները բոլոր —
Քո պատկերը անեղծ կը պահեմ
Օրերում անհաստատ ու մոլոր։
Եւ տանջանք, եւ բեկում, եւ թախիծ —
Սեւ օրեր ես զետ շատ կը տեսնեմ.
Անունըդ թող փարս լինի ինձ
Սուտ կեանքի եւ դառը մահու դէմ...»

Հեռու ես անհաս, իմ լուսէ երաղ,
Բայց քեզ է սիրաըս փայփայում թագուն,
Փոռւած է լոյսըդ շուրջըս եւ վրաս,
Անհուն աշխարհում եւ իմ հեղ հոգում։
Քո հեռու երկրի ուղին չը գիտեմ. —
Գուցէ ես ինքըս ստեղծել եմ քեզ,
Աստուածացրել եմ, որ քեզ աղօթեմ,
Հրամայել եմ, որ վրաս իշխես։

Եւ քաղցր է լինել քո կամքի գերին,
Քո չարութիւնը բարիք համարել.—
Կրծքաբաց ելնել ընդդէմ քո սրին
Եւ այդ ժահաբեր ձեռքը համբուրել...

* * *

Հեռու երկրի լուսէ հովտում
Օրերն ուրիշ երգ են հիւտում.
Կւանքից յոգնած սիրտաշ տրտում
Այն երկիրն է միշտ երազում...
Խաղաղութիւնն այն հեռանիստ,
Ուր մի ուրիշ արեւի փայլ
Ծալալում է անտանց հանգիստ
Եւ խնդութիւն մի անայլայլ,
Մի խնդութիւն մաքուր եւ խոր,
Եւ անեղերք, եւ անվախճան.
Ուր քո սիրտը որբ ու մոլոր
Գրկում է մի սոկէ շրջան...

ՀԻՆ ՊԱՐՏԻԶՈՒՄ

Այսօր նորից պարտիզում
Շրջում էի եւ յիշում
Քեզ արթմնի երազում
Ոսկի, սոկի մշուշում...

Դու քո հեռու հեռաւոր
Անյայտ երկրում արգեօք ինձ
Մտաբերո՞ւմ ես այսօր
Այն ոսկեղէն աշխարհից.—

Յիշո՞ւմ ես զու ակտացիան
Եւ պարագզը իրիկուայ,
Հանգիպումը մայիսեան
Պատանու եւ աղջկայ:

Եւ սենեակը ամփոփիկ
Եւ անակը հեռաւոր,
Գաղտնիքները մեր փոքրիկ,
Սակայն քաղցր, սակայն խոր:

Յիշո՞ւմ ես զու այն արագ
Ժամերը, երբ ես ու զու
Նստում էինք անկրակ.—
Դիւթանք սրաի՛ եւ հոգո՛ւ:

Եւ խաւարում, խաւարում
Յիշո՞ւմ ևս ջերմ չուրթերի
Հանդիպումը հրահրուն, —
Յուզմունքն արեան սրտը րի...

Եւ պարտիզում մեր անուշ
Տեսակցութիւնն այն գիշեր,
Կիսախաւառը քնքոյշ. —
Յնորական իմ յուշեր...

**

Դու շրջում ես ամենուրեիք, զու չը կաս,
Աներեւոյթ զու խօսում ես աշխարհում,
Յանկարծ անկարծ շշնջում ես, որ կը զաս,
Հըմայում ես, կանչում, կանչում ու լոռում...

Քնքուշաբոյր ծաղիկների թերթերում,
Լոյս դաշտերի խաղաղ նիրհող ովկիանում,
Եւ աստղազարդ, խորհրդաւոր գիշերում
Եւ ջրերի արծաթաճած որրանում:

Ամենուրեք մի կարօտ ես դու նիշել,
Քո ստուերն ես փակ անծիր աշխարհում,
Դու ես հիւսում աստղացանցը ոսկեթել,
Դիշեր ու զօր կեանքը զու ես զարդարում...

Եւ աշխարհի ուղիներում ես մոլոր
Թափառում եմ եւ որոնում ախրազէմ,
Լոռում եմ քո ձայնը անուշ - լուսաւոր
Կանչում եմ քեզ, բայց անունք չը դիտեմ...

* * *

Ես կը գամ, երբ զու մենակ կը մընաս
Տրտում իրիկուայ ստուերների տակ,
Երբ դու կը թեղես տենչերըդ խորտակ
Եւ վատութեամբ երբ կը հեռանաս...

Ես կը գամ, որպէս մոռացուած մի երգ,
Հիւսուած աղօթքից, սիրուց ու ծաղկից
Քո մեռած որտում կը լինի թախիծ
Ես կը կանչեմ քեզ զէպի այլ եղերք:

Ես կը գամ երբ զու կը լինես տրտում,
Երբ երազները յաւէտ կը մեռնեն
Զեռքըդ կը բոնեմ, ցաւըդ կը մըրոնեմ,
Կը վասիմ ուրիշ լոյսեր քո հոգում...

ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ

Քնքաբոյր ծաղկանց հրեղէն խաղով
Ժպտում են նորից անտառ ու ձորակ,
Եւ հեղեղները խօսուն — սասնորակ
Ողջունում են իւձ զուարթ ծիծաղով:
Զուգել ես նորից գաշտ, անտառ ու լիոն,
Գոսո՞ւն ամէն աեղ նոր կեանք ես վասել.
Իմ սրտում էլ ես թեւերըդ փոել,
Իմ հոգում էլ ես հրզենել նոր սէր:

Եւ ահա կրկին զուարթ ու ջահել,
Դուրս ելայ տխուր մենութեան բանափց.
Պայծառ աչքերըդ ողջունում են ինձ,
Եւ ես չեմ կարող իմ ճիշը պահել:

Բացել ես իմ գէմ ոսկեզէն հեռուն,
Ծաղկել ես սարում, անտառում, արտում...
Ուրիշ երգեր են հնչում իմ սրտում—
Ողջոյն քեզ, արեւ. ողջոյն քեզ գարուն...

ՑԱՆԿ

Էջ

Տիրութիւն	3
Հստոնական երգ	3
Աշոն	4
Շիրակի գաշտերից	4
Սարի յետեւում շողերը մեռան...	5
Եւ մոռացուած եւ անմոռաց հեքեաթներ...	5
Fatum	6
Ելեզիս	7
Անան երգ	7
Սիրտս ցաւում է...	8
Անծանօթ աղջկան	9
Անան մեղեղի	9
Ինձ թաղէք, երբ կարմիր...	10
Բիւր մարզոց մէջ...	11
Թափառական	11
Կարօտ	12
Լուսնոտ	13

Հրամեցու	
Իրիկաւաժամ	13
Անջատման երդ	14
Ցոորք	15
Թովիչ քնքշութեամբ . . .	16
Վիճի եղերքին	17
Տխուր. զրոյց	17
Հրաշք—աղջիկ	18
Որպէս ծալիկն է անխօս գունատեռմ . . .	19
Քո աչքերի դէմ իմ աչքերը կոյր . . .	19
Դու չես մեռել իմ հիւանդ սրտում . . .	20
Ես անջատուած եմ հայրենի հողից . . .	20
Տխուր մեռան կապուաչիայ . . .	21
Կրկին հնչում է թունաւոր լեզուդ . . .	22
Երբ պայծառ օրդ տխուր կը մթնի . . .	22
14 տող	23
Անանց կարօնն է իմ սիրաը տանջում . . .	24
Ցանկութիւն	24
Կայ իսորհրդաւոր մի հրապուրանք . . .	25
Հրամեցուի խօսքերից	26
Իմ գերեզմանին զուք չմօտենաք . . .	26
Աշնան երգ	27
Խաղաղ գիշերով դու կը զառ . . .	28
Թթնչաղ	29
Յերեկը լսեց . . .	29
Հիւանդ	30
Զարտասանուած տիսուր խօսքեր . . .	30
Սևափմնամալ ել գ	31
Ես չգիտեմ ո՞ւր են տանում . . .	32
Երեկոյ	32
Դու քնած ես . . .	33
Իմ մոլոր ձամբին դու անկարծ իջար . . .	34
Սեւ գիշերն իջաւ . . .	34
Հեռաւոր, անել լիոնազագաթներ . . .	35
Ազօթք	36
Մոայլ թաղումի ջահերի նման . . .	36
Դարձ	37
Զմրան գիշեր	37
Մոռանա՛լ, մոռանա՛լ ամեն ինչ . . .	38
Օտար երկնքի կամարների տակ . . .	39
14 տող	39
Սեւ դիշերն է զրել ինձ . . .	40
Գյկամ նայում են ժայռերը խոճոս . . .	40
Քո մաղերի ցնորական փայլը պայծառ . . .	41
Դիթեցին ինձ քո մաղերը ալեծածան . . .	42
Յուշերի երկրում	42
Գարուն	43
Կանչում ես անվերջ	43
Ապրելուց քաղցր է մեռել քեզ համար . . .	44
Երբ վարդ ամպերի . . .	44
Արգեօք ո՞ւր ես դու . . .	45
Աիրահարուածը	45
Անանուն սէր	46
Իմ խաղաղ երեկոն է հիմա . . .	47

Հեռու ևս անհաս...	47
Հեռու երկրի լուսէ հովասւմ...	48
Հին պարտիզում	49
Դու շրջում ևս ամենուրեք...	50
Ես կը գամ, երբ զու մենակ կը մնաս...	51
Գարնանամուտ	51

ՀՀ Ազգային գրադարան



NL0378011

58.684

